Վարժություն 1 Հնազանդությունը Աստծո պատվիրաններին

- Ի՞նչ օրենքներ կան ձեր համայնքում:
- Ի՞նչ արդյունք կտա այդ օրենքներին մշտապես հետևելը կամ չհետևելը:
- Այս համեմատությունն ինչո՞վ է նման կամ տարբեր Աստծո պատվիրաններից:

Նեփին և նրան հետևողները հնազանդվեցին Տիրոջ պատվիրաններին (տես 2 Նեփի 5.10): Կարդացեք վարդապետության սերտման Մոսիա 241 հատվածը և գտեք, թե թագավոր Բենիամինն ինչ էր ուզում, որ իր ժողովուրդը հասկանա Աստծո պատվիրանները պահելու մասին: Կարող եք այս հատվածից խաչաձև հղում կատարել 2 Նեփի 5.10 հատվածին:

- Ըստ ձեզ՝ ինչպե՞ս է Աստծո պատվիրաններին հնազանդվելն օգնում մեզ երջանիկ լինել:
- Հիսուս Քրիստոսն ինչպե՞ս է հնազանդության օրինակ եղել:
- Որո՞նք են Աստծո մի քանի պատվիրանները, որոնք ավելի մեծ երջանկություն են բերել ձեզ:

Վարժություն 2 Աշխատանքը և ինքնապահովումը

Թղթի վրա կամ ձեր օրագրում թվարկեք այն օգուտները, որոնք, ըստ ձեզ, գալիս են ջանասիրաբար աշխատելուց:

Կարդացեք 2 Նեփի 5.11, 15, 17 հատվածները և գտեք, թե ինչ տարբեր ձևերով էին աշխատում նեփիացիները, և ինչպիսին էին նրանց աշխատանքի արդյունքները:

Կարդացեք «Աշխատանք և ինքնապահովում» բաժինը *Երիտասարդներին զորացնելու համար գրքույկում* (2011) և մտածեք, թե ինչ եք սովորում աշխատանքի սկզբունքի մասին:

© 2023 by Intellectual Reserve, Inc. All rights reserved.
PD60013873_201_085-teacher_handout-1
PD60013873_201_085-teacher_handout-2